

ալ անձեռնմխելի չէր: Հեթանոսի մը հանդէպ մարդ շատ չի փնտռեր բարակը...:

Հաշտէու կը յիշատակէ աւազակային երգի մը մէկ հատուածը

Պիտի իջնեմ գիւղ,
Պիտի անցնիմ անտառը,
Հարքալայրին եգերքը,
Անտառին ծայրը,
Հայուն նամբուն վրայ:

ԺԹ. դարու կէսերէն յետոյ է որ ուումէն հողեւորականութիւնը երբ կը ձեւրագատուի յոյն կղերին լուծէն, կը սկսի ճշմարտութիւնը քարոզել:

Առաջին անգամ Ունկրօ-Վալաքիոյ նախամեծար Մետրոպոլիտ Իօսիֆ Կէօրկեան Արքեպիսկոպոսն էր որ 1887-ին ուումաներէնի թարգմանեց ուսուստուածաբանութեան վարդապետ W. Guette'e-ի մէկ գործը, «Պարզում Քրիստոնեայ Ուղղափառ Եկեղեցւոյ վարդապետութեան» (Espanerea Doctrinei Bisericei Crestine Ortodosce): Ռուս աստուածաբանը իր այս գործին մէջ կը ճշդէր յոյն եւ հայ եկեղեցիներու զանազանութիւնը՝ հաստատելով միեւնոյն ատեն հայ եկեղեցւոյ վարդապետական մաքրութիւնը:

Ռոմանի եպիսկոպոս Մելքիսեդեկ իր Քրօնիկոն Ռոմանու (Chronica Romanului էջ 33) գործին մէջ, խօսելով հայոց եւ հայ եկեղեցւոյ մասին, կ'աւելցնէ. «Յունաց եւ հայոց միջեւ հին ատեն տեղի ունեցած կրօնական վէճերու պատճառաւ, սոյն երկու ազգերը իրարու դէմ շատ մեծ ատելութիւն եւ հակակրանք տածեցին որ յաճախ մինչեւ մոլեռանդութեան հասաւ: Յոյները խել մը զրպարտական առասպելներ հնարեցին հայոց նկատմամբ, եւ զրութեանց միջոցաւ զանոնք տարածեցին ուրիշ Օրթոտոքս ազգերու մէջ ալ: Անոնք յերձուրեցին թէ հայերը կ'երկրպագեն Հարձիպուրի որ քանդակուած է իրենց եկեղեցիին մէջ եւ թէ Ս. Զատիկ խթման իրկուներ երբ կը հաւաքուին յարութեան տօնը կատարելու՝ կը համբուրեն այդ պատկերը. թէ ի պատիւ անոր ձմրան բարեկենդանի շաբաթը, զոր մենք հարձի կը կոչենք, պահք կը պահեն. թէ հայերը մեծ հաճոյք կը զգան կերակուրով պղծել Օրթոտոքս քրիստոնեաները եւ ստոր համար

ճաշի կը հրաւիրեն զանոնք: Յոյն լեզուէ թարգմանուած ուումաներէն գիրք մը կարդացի ուր այս տեսակ բարձրութիւն առասպելներ կային, ի մէջ այլոց եւ հարձիպուրի պատմութիւնը: Նման առասպելներ դտայ նաեւ հին ձեռագրի մը մէջ, սլաւոններէնէ թարգմանուած 1668-ին Թրկօվիթի պետական եկեղեցւոյ ըստասաւոր Սթայքօի կողմէ: Գիրքը ուղղուած է հրէաներուն, լատիններուն, հայերուն, լուսեփականներուն դէմ»:

Ռումէն Սինոդը 1876-ին էր որ վերջապէս ձեռնարկեց ճշդել ուումէն Օրթոտոքս կղերին կրօնական յարաբերութիւնները ուումէն երկիրներու մէջ ապրող ուրիշ ծէսի քրիստոնեաներուն հետ, նպատակ ունենալով ջնջել կրօնական պատճառներէ բխած հակամարտութիւնները՝ որոնք դեռ պահպանուած էին կրօնականներէ ոմանց սրտին մէջ, եւ հրամայելով այս առթիւ որ Օրթոտոքս հողեւորականները պատշաճ եւ յարգալից վերաբերում ունենան ուրիշ դաւանանքի պատկանող քրիստոնեաներուն հանդէպ, չանարգեն եւ չհեզնեն անոնց կրօնական ծէսերը, տան ամէն անգամ որ պահանջուի՝ հողեւոր ավակցութիւն աղօթքով եւ հողեկան մխիթարանքով, անոնց կրօնական պաշտօնէին չգոյութեան՝ կատարեն մեռելներու թաղումը Օրթոտոքս կրօնին բոլոր ծէսերուն համեմատ, աղօթքով, խաչհանդիստով եւ հողհանդիստով, ըլլայ տան, ըլլայ գերեզմանատան մէջ, եւ այն պարագային երբ անոնցմէ մէկը փախաքի Օրթոտոքս եկեղեցիին հողեւոր զաւակ դատնայ՝ ի նորոյ չմկրտեն զայն, այլ միմիայն միւռոնեն:

Հայ եկեղեցւոյ «հերետիկոսութեան» մասին մինչեւ վերջերս ալ շարունակած են սակայն խօսիլ ու գրել ուումէն մտաւորականներ: Ասոնցմէ մէկը էքօնօմ Շթէֆան Քըլինէսքու, զբաղանութեան եւ փիլիսոփայութեան ուսուցիչ, 1888-ին կը հրատարակէ Պուքրէշ վարդապետութիւնի Օրթոտոքս Եկեղեցւոյ (Dogmele Bisericei Ortodosce):

Ուրիշ հեղինակ մը, Ժօրթ Արամ, փրոֆեսոր Եաշի Վէնիամին կղերանոցին, 1890-ին հրատարակեց իր «Եկեղեցական Ընդհանուր Պատմութեան (Istoria Universala Ecclesias